ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 սեպտեմբերի 2011 թվականի N 35

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՈՐՊԵՍ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 2-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16- րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ծաղկաձոր համայնքի Պահլավունյաց փողոց 21 հասցեում գտնվող 0.06 հա մակերեսով, Պահլավունյաց փողոց 35 հասցեում գտնվող 0.06 հա մակերեսով, Պահլավունյաց փողոց 37 հասցեում գտնվող 0.06 հա մակերեսով, Պահլավունյաց փողոց 60 հասցեում գտնվող 0.16 հա մակերեսով, Սարալանջի փողոց 78 հասցեում գտնվող 0.1 հա մակերեսով, Մ. Մկրտչյան փողոց 31 հասցեում գտնվող 0.3 հա մակերեսով, և Անտառային 1 թաղամաս 18 հասցեում գտնվող 0.282 հա մակերեսով հողամասերի սեփականատերերին ուղղակի վաճառքի միջոցով օտարել այդ հողամասերին հարակից, համայնքային սեփականություն համարվող հողամասերը որպես ընդլայնում:
2. Հողամասերի վաճառքի գինը սահմանել կադաստրային արժեքի չափով:

Ավագանու անդամներ՝

Հ. Ասատրյան
Ս. Մանուկյան
Գ. Հայրապետյան
Կ. Առաքելյան
Գ. Կարապետյան
Դ. Առաքելյան
Ա. Սողոմոնյան

ՔԱՂԱՔԱՊԵՏ ԳԱՐՈՒՆ ՄԻՐԶՈՅԱՆ

Ի ս կ ա կ ա ն ի հ ե տ ճ ի շ տ է